

Հավելված  
Հաշվեքննիչ պալատի  
2021թ. հուլիսի 30-ի թիվ 190-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



### ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ  
ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                                                                                                                  |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ                                                                                                                                                                                                           | 1  |
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ                                                                                                                                                                                                                  | 2  |
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ                                                                                                                                                                                                                | 6  |
| ԱՄՓՈՓԱԳԻՐ                                                                                                                                                                                                                        | 6  |
| ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ                                                                                                                                                                                    | 10 |
| I. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ                                                                                                                                                                               | 11 |
| 1. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421200/ և «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421300/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ                           | 11 |
| 2. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421300/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ                                                                       | 15 |
| 3. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421200/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ                                                                      | 19 |
| 4. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421200/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԳԱԶ/ 23                                                             |    |
| 5. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ և ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4236/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ 2020Թ.-Ի ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ և ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | 28 |
| 6. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՌԿԱ ՃԱՇԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ և ԽՈՀԱՐԱՐՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ                                    | 32 |

|                                                                                                                                                                                                     |    |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| <b>II. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԴՈՒՄՆԵՐ</b> .....                                                                                                                                             | 37 |
| 7. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՈՒՄ ԱՌԿԱ ՃԱՇԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ և ԽՈՀԱՐԱՐՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... | 37 |
| <b>ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ</b> .....                                                                                                                                                                 | 45 |

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 19-ի 159-Ա որոշում:

### **Հաշվեքննության օբյեկտը**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն:

### **Հաշվեքննության առարկան**

2021 թվականի երեք ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը:

### **Հաշվեքննության չափանիշները**

1. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
2. ՀՀ կառավարության 15.10.2015թ-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 1182-Ն որոշում,
3. ՀՀ կառավարության 16.06.2005թ-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաները հաստատելու մասին» թիվ 896-Ա որոշում,

### **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը**

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը:

### **Հաշվեքննության կատարման ժամկետը**

2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:

### **Զննման և դիտարկման ընթացակարգերի**

2021 թվականի մայիսի 24-ից մինչև 2021 թվականի հունիսի 25-ը ներառյալ:

## իրականացման ժամկետը

### Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ, զննում և դիտարկում ընթացակարգերը:

### Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

|     |                                                                                     |
|-----|-------------------------------------------------------------------------------------|
| ՔԿԾ | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն |
| ՔԿՀ | Քրեակատարողական հիմնարկներ                                                          |

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննություն:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության **1120՝ «Քրեակատարողական ծառայություններ»** ծրագրով 2021 թվականի բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 11,081,831.60 հազ.դրամ, առաջին եռամսյակի ճշտված պլանը՝ 2,357,749.52 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 1,798,716.09 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 2,614,552.54 հազ.դրամ:

1120-11001՝ «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացված հաշվեքննությամբ արձանագրվել են.

**/4212/ «Էներգետիկ ծառայություններ» և /4213/ «Կոմունալ ծառայություններ»** տնտեսագիտական հոդվածներով ծախսերի պլանավորման հետ կապված հայտնաբերվել են անհամապատասխանություններ սահմանված նորմաների պահանջների հետ, որը ներկայացված է ընթացիկ եզրակացության 1-ին կետում:

**/4213/ «Կոմունալ ծառայություններ»** տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերի և սահմանված նորմաների պահանջների միջև, որը ներկայացված է ընթացիկ եզրակացության 2-րդ կետում:

**/4212/ «Էներգետիկ ծառայություններ»** տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարման ծախսերի և սահմանված նորմաների պահանջների միջև, որը ներկայացված է ընթացիկ եզրակացության 3-րդ և 4-րդ կետերում:

**/4236/ «Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ»** հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ կապված՝ սննդի պատրաստման

համար նախատեսված կոմունալ ծախսերի /բնական գազ, ջուր, էլեկտրաէներգիա/, ինչպես նաև այդ գործընթացին մասնակցող թվով վեց ՔԿՀ-ներում սահմանված հաստիքներով / ճաշարանի բանվորներ, խոհանոցի բանվորներ և խոհարարների օգնականներ/ աշխատող դատապարտյալներին վճարվող աշխատավարձերի հետ: Նշված ծախսերը կատարվել են քրեակատարողական հիմնարկների հաշվին՝ մատակարարի փոխարեն, որը նախատեսված է եղել Պայմանագրով: Այսպիսով, առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պայմանագրի սահմանված պահանջների և պայմանագրին կից տեխնիկական բնութագրի հետ, որոնք արտացոլված են ընթացիկ եզրակացության 5-րդ և 6-րդ կետերում:

Սույն հոդվածով արձանագրվել են նաև խեղաթյուրումներ՝ կապված վերոնշյալ հաստիքների գծով՝ 2021 թվականի եռամսյակի ընթացքում աշխատակիցներին վճարված գումարի չափով: Նշված խեղաթյուրումն արտացոլված է ընթացիկ եզրակացության 7-րդ կետում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

Գեղամ Հովեյան

30 հուլիս 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան 19 փող., ք. Երևան, Հայաստան



## ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2021 թվականի առաջին եռամսյակ

հազ.դրամ

| Ծրագիր          |                                                                 | Տարեկան<br>ճշտված պլան | Հաշվետու<br>ժամանակահատվածի<br>ճշտված պլան | Ֆինանսավորում | Փաստ         | Փաստացի<br>ծախս |
|-----------------|-----------------------------------------------------------------|------------------------|--------------------------------------------|---------------|--------------|-----------------|
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը |                                                                 | 11,238,215.60          | 2,383,741.52                               | 1,825,328.34  | 1,823,550.09 | 2,651,846.54    |
| 1015            | Սոցիալական<br>փաթեթների ապահովում                               | 156,384.00             | 25,992.00                                  | 24,834.00     | 24,834.00    | 37,294.00       |
| 1120            | Քրեակատարողական<br>ծառայություններ                              | 11,081,831.60          | 2,357,749.52                               | 1,800,494.34  | 1,798,716.09 | 2,614,552.54    |
| 8979            | Նախորդ տարիների<br>դեբիտորական և/կամ<br>կրեդիտորական<br>պարտքեր | -                      | -                                          | -             | -            | -               |

## I. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421200/ և «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421300/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջների մասով:**

«Էներգետիկ ծառայություններ» և «Կոմունալ ծառայություններ» հոդվածներով 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ՔԿԾ-ին հատկացնել 807,388.35 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (01.01.2021-31.03.2021թթ.) ճշտված պլանը կազմել է՝ 312,056.22 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 270,059.17 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 253,082.55 հազ.դրամ:

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ հաստատվել է ՔԿԾ կոմունալ ծախսերի նորմաները, համաձայն որի՝ քրեակատարողական հիմնարկների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է ծախսերի հետևյալ սահմանաչափերը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝

ա) խմելու ջուր, ջրահեռացում՝ 180 լիտր.

բ) էլեկտրաէներգիա (առանց ջեռուցման և տաք ջրամատակարարման համար ծախսվող էլեկտրաէներգիայի)՝ 5 կվտ/ժ.

գ) էլեկտրաէներգիա՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար՝ 8 կվտ/ժ.

դ) բնական գազ՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար՝ 1 խմ:

Ուսումնասիրելով 2021թ. պետական բյուջեի պլանավորման համար քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված էներգետիկ և կոմունալ ծառայությունների բյուջետային հայտերը, պազվել է, որ բացի դատապարտյալների կամ կալանավորվածների նախատեսվող թվաքանակից, նույն նորմերով պլանավորվել է նաև քրեակատարողական ծառայության աշխատակազմի

/քրեակատարողական հիմնարկների աշխատակազմ/ նախատեսվող աշխատակիցների թվաքանակը՝ 1972 մարդ:

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջների մասով, այն է՝ «քրեակատարողական հիմնարկների աշխատակազմերը ներառված են մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու նորմաների սահմաններում» կամ 2021թ. համար ավելին է պլանավորվել՝**

- **Էլեկտրաէներգիայի գծով -219,680.80 հազ. դրամ**
- **Գազամատակարարման գծով – 100,049.42 հազ. դրամ**
- **Ջրամատակարարման և ջրահեռացման գծով – 23,320.87 հազ. դրամ:**

Բացի այդ նշենք, որ էլեկտրաէներգիայի պլանավորումը իրականացվել է հետևյալ կերպ, 245 օրվա համար մեկ օր մեկ դատապարտյալ՝ 5 կվ/ժ, իսկ 120 օրը՝ 13 կվ/ժամ, տաք ջրամատակարարման և ջերմամատակարարման հաշվարկով, 1 կվ/ժ- միջինով 40 դրամ: Իսկ գազամատակարարման համար նման տարբերակում սահմանված չէ և ամբողջ տարվա համար հաշվարկվել է մեկ օր՝ մեկ դատապարտյալ՝ մեկ խ/մ գազ:

Նշված հաշվարկը առաջացնում է որոշակի անհամապատասխանություններ պլանավորման փուլում, այն է, եթե քրեակատարողական հիմնարկի տաք ջրամատակարարումը և ջերմամատակարարումը իրականացվում է բնական գազի միջոցով, ապա էլեկտրաէներգիայի համար տարեկան 120 օրը 13 կվ/ժ հաշվարկի փոխարեն պետք է կատարվի 5 կվ/ժ հաշվարկով, ինչը չի կատարվել: Նույնը վերաբերվում է հակառակ դեպքին, եթե տաք ջրամատակարարումը և ջերմամատակարարումը իրականացվում է էլեկտրաէներգիայի միջոցով, ապա անհրաժեշտություն է առաջանում տարանջատել բնական գազի նորմաները: **Հետևաբար առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետով սահմանված նորմաների և նշված հոդվածներով պլանավորված ծախսերի միջև:**

Համաձայն քրեակատարողական ծառայության կողմից հաշվեքննությանը տրամադրված տեղեկանքի, բոլոր քրեակատարողական հիմնարկներում հասանելի է բնական գազի մատակարարումը, սակայն որոշ տեղեր ջերմամատակարարումը իրականացվում է և բնական գազի, և էլեկտրաէներգիայի միջոցով:

### Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

1) Ինչպես պետական բյուջեի պլանավորման ժամանակ, այնպես էլ հաշվեքննության ընթացքում Հաշվեքննիչ պալատին ներկայացված տեղեկանքում հստակ տարանջատված են եղել թե՛ ՔԿՀ-ներում անազատության մեջ պահվող անձանց և թե՛ քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) թվաքանակը, այդ թվում՝

- անազատության մեջ պահվող անձ 2.400
- քրեակատարողական ծառայողներ (աշխատակիցներ), այդ թվում՝ «Էրեբունի ՔԿՀ-ի և ՔԿԾ կենտրոնական մարմնի աշխատակազմ 2.183

Քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) ծախսերը հաշվարկներում առանձին չներառելու պահանջը զուրկ է տրամաբանությունից, քանի որ վերջիններս նույնպես հանդիսանում են էլեկտրաէներգիայի, բնական գազի և խմելու ջրի սպառողներ, ընդ որում, նրանց սպառման սահմանաչափերը և փաստացի ծավալներն օբյեկտիվորեն հնարավոր չէ տարանջատել ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և(կամ) դատապարտյալների սպառման քանակներից:

Բացի այդ, ՔԿՀ-ների ներկայիս բեռնվածության պայմաններում առաջացել է որոշակի իրավիճակ, երբ ՔԿՀ-ների մեծամասնությունում վարչակազմի հաստիքները գերազանցում են այնպեղ պահվող հատուկ քանակակազմին, որպիսի պայմաններում էներգետիկ և(կամ) կոմունալ ծառայությունների ծախսերի հաշվարկի հիմքում միայն կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակն ընդունելը խելամիտ չէ (նման հարաբերակցության կապակցությամբ հարկ է նշել, որ պահակները ձևավորվում և դրանցում ծառայությունը նշանակվում է անկախ հսկողության տակ գտնվող դատապարտյալների և կալանավորված անձանց թվաքանակի մեծության)<sup>1</sup>:

<sup>1</sup> Տնտեսական արդյունավետության և ֆինանսական միջոցների խնայման անհրաժեշտությամբ պայմանավորված ներկայումս քննարկվում են քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և արդիականացման մի շարք ծրագրեր:

2) ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման բ), գ) և դ) ենթակետերով սահմանված էլեկտրաէներգիայի և գազի ծախսի նորմերից հետևում է, որ տարվա 120 օրը (ջեռուցման ժամանակահատվածը) իրականում պետք է հաշվարկվի՝ 5 կվ/ժ + 8 կվ/ժ էլեկտրաէներգիա և 1 մ<sup>3</sup> բնական գազ, իսկ 245 օրը՝ 5 կվ/ժ էլեկտրաէներգիա: Այսինքն, ջեռուցման ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի և բնական գազի ծախսերը ենթակա չեն տարանջատման:

Բացի այդ, Հաշվեքննիչ պալատը հաշվարկները կատարելիս փաստացի անտեսել է, որ ջեռուցման ժամանակահատվածից բացի բնական գազ սպառվում է նաև տարվա մյուս ժամանակահատվածում՝ տաք ջրամատակարարման համար:

**Այսպիսով, էներգետիկ և կոմունալ ծառայությունների ծախսերի գծով իրականում ավել գումարներ չեն պլանավորվել:**

#### **Հաշվեքննողների մեկնաբանությունը**

1) ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետը հստակ սահմանում է, որ քրեակարարողական հիմնարկների համար ծախսերի սահմանաչափերը սահմանված են՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար, որի մեջ ներառված են քրեակարարողական հիմնարկների աշխատակազմերը: Հաշվեքննողները արձանագրված անհամապատասխանությունները շարադրելիս առաջնորդվել են ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջներով, այլ ոչ թե տրամաբանությամբ:

2) Արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է այն հանգամանքին, որ եթե ջերմամատակարարման ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի հաշվարկը կատարվում է 13 կվ/ժ /էլեկտրաէներգիա 5 կվ/ժ+տաք ջերմամատակարարում և ջրամատակարարում՝ 8 կվ/ժ/ նորմայով, և ըստ տրամաբանության բնական գազի սպառումը չպետք է լինի, իսկ տարվա ընթացքում բնական գազի սպառումը պետք է տարանջատվի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ջերմամատակարարում չի իրականացվում:

### **Եզրակացություն**

ՀՀ արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայության համար 2021թ.-ին էներգետիկ և կոմունալ ծառայությունների մասով սահմանված նորմաներից ավելին է պլանավորվել՝

- Էլեկտրաէներգիայի գծով -219,680.80 հազ. դրամ
- Գազամատակարարման գծով – 100,049.42 հազ. դրամ
- Զրամատակարարման և ջրահեռացման գծով – 23,320.87 հազ. դրամ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջների մասով:

2. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421300/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված ջրի ծախսի նորմայի և փաստացի ծախսված ջրի քանակի միջև:**

ՀՀ պետական բյուջեից ՔԿԾ-ին «Կոմունալ ծառայություններ» հոդվածով 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 90,117.10 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (01.01.2021-31.03.2021թթ.) ճշտված պլանը կազմել է՝ 17,190.98 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 16,470.98 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 13,556.33 հազ.դրամ:

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ քրեակատարողական հիմնարկների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է խմելու ջրի և ջրահեռացման ծախսերի հետևյալ սահմանաչափը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝ 180 լիտր:

Ուսումնասիրելով քրեակատարողական հիմնարկների ջրամատակարարման և ջրահեռացման համար իրականացված ծախսերը, պարզվել է, որ փաստացի կատարված ծախսերը գերազանցել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նորմաները: Տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակով՝



Աղյուսակ 1

| Հ/Հ | ՔԿՀ-ի<br>անվանումը | Հունվար                                                                   |                          | Փետրվար                                                                   |                          | Մարտ                                                                      |                          | Ընդամենը                                                                  |                          |
|-----|--------------------|---------------------------------------------------------------------------|--------------------------|---------------------------------------------------------------------------|--------------------------|---------------------------------------------------------------------------|--------------------------|---------------------------------------------------------------------------|--------------------------|
|     |                    | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | Գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | Գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | Գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | Գումար<br>/հազ.<br>դրամ/ |
| 1.  | «Սևան»             | 183.64                                                                    | 28.09                    | 65.32                                                                     | 9.99                     | -29.10                                                                    | -4.45                    | 219.86                                                                    | 33.63                    |
| 2.  | «Կոշ»              |                                                                           | 0                        | -151.24                                                                   | -23.14                   | -74.40                                                                    | -11,38                   | -225,64                                                                   | -34.52                   |
| 3.  | «Արթիկ»            | 3,905.42                                                                  | 597.52                   | 3,498.90                                                                  | 535.33                   | 5,673.58                                                                  | 868.05                   | 13,077.90                                                                 | 2,000.92                 |
| 4.  | «Աբովյան»          | 2,543.84                                                                  | 457.89                   | 2,527.90                                                                  | 455.02                   | 1,321.10                                                                  | 237.79                   | 6,392.86                                                                  | 1,150.71                 |
| 5.  | «ԴՀ»               | 4,643.10                                                                  | 835.75                   | 5,549.0                                                                   | 998.82                   | 2,691.10                                                                  | 484.39                   | 12,883.2                                                                  | 2,318.97                 |
| 6.  | «Նուբարաշեն»       | 8,988.08                                                                  | 1,617.85                 | 6,910.0                                                                   | 1,243.80                 | 8,481.50                                                                  | 1,526.67                 | 24,379.6                                                                  | 4,388.33                 |
| 7.  | «Գորիս»            | 765.12                                                                    | 137.72                   | 324.24                                                                    | 583.63                   | 13.64                                                                     | 2.45                     | 1,103.00                                                                  | 198.54                   |
| 8.  | «Վանաձոր»          | -91.04                                                                    | -16.38                   | 9.68                                                                      | 1.7                      | 95.02                                                                     | 17.10                    | 13.66                                                                     | 2.45                     |
| 9.  | «Վարդաշեն»         | 5,199.36                                                                  | 935.88                   | 3,592.84                                                                  | 646.71                   | 3,803.68                                                                  | 684.66                   | 12,595.9                                                                  | 2,267.25                 |
| 10. | «Հրազդան»          | 1,905.1                                                                   | 342.91                   | 1,527.84                                                                  | 275.01                   | 1,515.84                                                                  | 272.85                   | 4,948.78                                                                  | 890.78                   |
| 11. | «Արմավիր»          | 573.52                                                                    | 103.23                   | -327.16                                                                   | -58.88                   | 108.22                                                                    | 19.47                    | 354.58                                                                    | 63.82                    |
|     | <b>Ընդամենը</b>    | <b>28,616.14</b>                                                          | <b>5,040.50</b>          | <b>23,527.40</b>                                                          | <b>4,142.78</b>          | <b>23,600.18</b>                                                          | <b>4,097.64</b>          | <b>75,743.7</b>                                                           | <b>13,280.92</b>         |

Ինչպես երևում է աղյուսակից, բոլոր քրեակատարողական հիմնարկներում ջրամատակարարման և ջրահեռացման ծախսերը գերազանցում են սահմանված նորմերը: Նշենք, որ «Սևան», «Կոշ» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի հաշվարկը իրականացվել է 153 դրամով, հաշվի առնելով, որ նշված հիմնարկներում ջրահեռացում չի իրականացվում: Հաշվարկների մեջ ներառված չեն քրեակատարողական ծառայության կետրոնական մարմնի և «Էրեբունի» հիմնարկի ծախսերը, հաշվի առնելով, որ այնտեղ տեղակայված են ծառայության աշխատակազմը: «Կոշ» քրեակատարողական հիմնարկի հաշվարկում բացակայում է հունվար ամսվա ծախսը, որի արդյունքում հաշվարկը ստացվել է նորմայից ցածր:

**Արդյունքում, 2021 թվականի երեք ամիսների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 75,743.7 մ/խ, գումարով՝ 13,280.90 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված նորմայի և փաստացի ծախսված ջրի քանակի միջև:**

#### **Հաշվեքննության օբյեկտի արձագանքը**

Հաշվեքննիչ պալատի արձանագրածը պայմանավորված է 2 հանգամանքով՝

1) Որպես ելակետային տվյալ է ընդունվել միայն ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, և չեն հաշվարկվել քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) սպառման ծախսերը (ՔԿԾ պատճառաբանությունը տե՛ս նախորդիվ):

2) Սահմանված նորմաների գերազանցման հիմնական պատճառը դեռևս նախկին տարիներին կառուցված ջրագծերի տեխնիկական մաշվածության հետևանքով խմելու ջրի արտահոսքն է: Այն վերացնելու համար Քրեակատարողական ծառայությունը պարբերաբար ձեռնարկել և շարունակում է հետևողական միջոցառումներ իրականացնել մաշված ու վնասված ջրագծերի կամ դրանց վթարների հայտնաբերման և վերացման ուղղությամբ (մասնավորապես՝ 2021թ. մայիս – հունիս ամիսներին փոխարինվել են «Վանաձոր» ՔԿՀ-ի և ՔԿԾ կենտրոնական մարմնի հիմնական ջրագծերը):

**Արդյունքում 2021 թվականի երեք ամիսների ընթացքում խմելու ջրի ավել ծախսն իրականում կազմել է 44.701,2 մ<sup>3</sup>, գումարով՝ 7.946.780 ՀՀ դրամ<sup>2</sup>:**

### **Հաշվեքննողների մեկնաբանությունը**

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետը հստակ սահմանում է, որ քրեակարարողական հիմնարկների համար ծախսերի սահմանաչափերը սահմանված են՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար, որի մեջ ներառված են քրեակարարողական հիմնարկների աշխատակազմերը:

Պարզաբանմամբ նշվածը վերաբերվում երկրորդ եռամսյակում իրականացված աշխատանքներին, որը կուսումնասիրվի 6 ամիսների հաշվեքննության ընթացքում:

### **Եզրակացություն**

1) 2021 թվականի երեք ամիսների ընթացքում ՔԿԾ-ի ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 75,743.7 մ/խ, գումարով՝ 13,280.90 հազ. դրամ:

2) Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված ջրի ծախսի նորմայի և փաստացի ծախսված ջրի քանակի միջև:

3. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421200/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև:**

ՀՀ պետական բյուջեից ՔԿԾ-ին «էներգետիկ ծառայություններ» հոդվածով 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 717,271.25 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի

<sup>2</sup> Տե՛ս աղյուսակ 1:

(01.01.2021-31.03.2021թթ.) ճշտված պլանը կազմել է՝ 294,865.24 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 253.588.19 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 239,526.22 հազ.դրամ:

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ քրեակատարողական հիմնարկների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է էլեկտրաէներգիայի ծախսերի հետևյալ սահմանաչափը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝ էլեկտրաէներգիայի (առանց ջեռուցման և տաք ջրամատակարարման համար ծախսվող էլեկտրաէներգիայի) համար՝ 5 կվտ/ժ, և էլեկտրաէներգիա՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար՝ 8 կվտ/ժ: Արդյունքում ջերմամատակարարման ժամանակահատվածի ծախսը կազմում է 13 կվ/ժ:

Ուսումնասիրելով քրեակատարողական հիմնարկների էլեկտրաէներգիայի մատակարարման համար իրականացված ծախսերը, պարզվել է, որ ծախսերը գերազանցել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նորմաները: Տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակով՝

## Աղյուսակ 2

| Հ/Հ | ՔԿՀ-ի<br>անվանումը | Հունվար                                                           |                          | Փետրվար                                                           |                          | Մարտ                                                              |                          | Ընդամենը                                                        |                          |
|-----|--------------------|-------------------------------------------------------------------|--------------------------|-------------------------------------------------------------------|--------------------------|-------------------------------------------------------------------|--------------------------|-----------------------------------------------------------------|--------------------------|
|     |                    | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն կվ/ժամ | գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն կվ/ժամ | գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն կվ/ժամ | գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշների<br>տարբերու<br>թյուն կվ/ժ | գումար<br>/հազ.<br>դրամ/ |
| 1.  | «Սևան»             | 53,006.0                                                          | 2,120.24                 | 52,128.0                                                          | 2,085.12                 | 57,060.0                                                          | 2,282.40                 | 162,194.0                                                       | 6,487.76                 |
| 2.  | «Կոշ»              | 56,548.0                                                          | 2,261.92                 | 36,226.0                                                          | 1,449.04                 | 32,560.0                                                          | 1,302.40                 | 125,334.0                                                       | 5,013.36                 |
| 3.  | «Արթիկ»            | 27,078.0                                                          | 1,083.12                 | 14,847.0                                                          | 593.88                   | 14,026.0                                                          | 561.04                   | 55,951.0                                                        | 2,238.04                 |
| 4.  | «Աբովյան»          | 25,595.0                                                          | 1,023.80                 | 14,232.0                                                          | 569.28                   | 11,575.0                                                          | 463.00                   | 51,402.0                                                        | 2,056.08                 |
| 5.  | «ԴՀ»               | 36,885.0                                                          | 1,475.40                 | 19,200.0                                                          | 768.0                    | 13,445.0                                                          | 537.80                   | 69,530.0                                                        | 2,781.20                 |
| 6.  | «Նուբարաշեն»       | 32,120.0                                                          | 1,284.80                 | 12,758.0                                                          | 510.32                   | 13,603.0                                                          | 544.12                   | 58,481.0                                                        | 2,339.24                 |
| 7.  | «Գորիս»            | -4,479.0                                                          | -179.16                  | -10,806.0                                                         | -432.24                  | -12,448.0                                                         | -497.92                  | -27,733.0                                                       | -1,109.32                |
| 8.  | «Վանաձոր»          | 14,816.0                                                          | 592.64                   | 16,828.0                                                          | 673.12                   | 23,177.0                                                          | 927.08                   | 54,821.0                                                        | 2,192.84                 |
| 9.  | «Վարդաշեն»         | 10,636.0                                                          | 425.44                   | -1,056.0                                                          | -42.24                   | 488.0                                                             | 19.52                    | 10,068.0                                                        | 402.72                   |
| 10. | «Հրազդան»          | -21,025.0                                                         | -841.00                  | -22,456.0                                                         | -898.24                  | -25,976.0                                                         | -1,039.04                | -69,457.0                                                       | -2,778.28                |
| 11. | «Արմավիր»          | -129,688.0                                                        | -5,187.52                | -165,135.0                                                        | -6,605.40                | -186,364.0                                                        | -7,454.56                | -481,187.0                                                      | -19,247.48               |
|     | <b>Ընդամենը</b>    | <b>101492</b>                                                     | <b>4,059.68</b>          | <b>-33,234.0</b>                                                  | <b>-1,329.36</b>         | <b>-58.85</b>                                                     | <b>-2,354.16</b>         | <b>9,404.0</b>                                                  | <b>376.16</b>            |

Ինչպես երևում է աղյուսակից, էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը քրեակատարողական հիմնարկներում, հիմնականում գերազանցում են սահմանված նորմաները: Հաշվարկների մեջ ներառված չեն քրեակատարողական ծառայության կետրոնական մարմնի և «Էրեբունի» հիմնարկի ծախսերը, հաշվի առնելով, որ այնտեղ տեղակայված են ծառայության աշխատակազմը: «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ծախսը հաշվարկվել է 13 կվ/ժ նորմայով /տաք ջրամատակարարմամբ և ջերմամատակարարմամբ/, սակայն այնտեղ առկա է գազամատակարարմամբ իրականացվող տաք ջրամատակարարում և ջերմամատակարարում: Եթե հաշվարկենք 5 կվ/ժ նորմայով, ապա կստացվի դրական տարբերություն՝ 41.0 դրամ ավելին: Նույն հաշվարկը կիրառելի է նաև այլ քրեակատարողական հիմնարկների պարագայում:

Արդյունքում, 2021 թվականի երեք ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 9,404 կվ/ժ, գումարով՝ 376.10 հազ. դրամ: Նշենք նաև, որ հաշվարկը կատարվել է 13 կվ/ժ հաշվարկով, այնինչ մարտի 15-ին ջեռուցման ժամանակահատվածը ավարտվել է /հնարավոր չէ տարանջատել/: **Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև:**

### **Հաշվեքննության օբյեկտի արձագանքը**

Հաշվեքննիչ պալատի արձանագրածը պայմանավորված է 2 հանգամանքով՝

1) Որպես ելակետային տվյալ է ընդունվել միայն ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, և չեն հաշվարկվել քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) սպառման ծախսերը (ՔԿԾ պատճառաբանությունը տե՛ս նախորդիվ):

2) Ջեռուցման ժամանակաշրջանի վերաբերյալ հաշվարկները կատարելիս անտեսվել է, որ անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով «Սևան», «Կոշ», «Արթիկ», «Վանաձոր» և «Հրազդան» ՔԿՀ-ներում ջեռուցման ժամանակաշրջանը երկարացված է եղել մինչև 31.03.2021թ., «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ մինչև 26.03.2021թ., իսկ «Արթիկ» ՔԿՀ-ում՝ մինչև 10.04.2021թ. (հիմք՝ Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի

15.03.2021թ. թիվ 45-Ա, 19.03.2021թ. թիվ 52-Ա և 01.04.2021թ. թիվ 65-Ա հրամաններ):

**Ճշգրտված հաշվարկներով 2021 թվականի երեք ամիսների ընթացքում իրականում առկա է 2.412.260 կվտ/ժ էլեկտրաէներգիայի խնայողություն՝ 100.446.639 ՀՀ դրամի չափով<sup>3</sup>:**

#### **Հաշվեքննողների մեկնաբանությունը**

1) ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետը հստակ սահմանում է, որ քրեակարարողական հիմնարկների համար ծախսերի սահմանաչափերը սահմանված են՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար, որի մեջ ներառված են քրեակարարողական հիմնարկների աշխատակազմերը:

2) Հաշվարկները իրականացվել են հումվար-մարտ ամիսների համար՝ էլեկտրաէներգիա 13 կվ/ժ հաշվարկով, իսկ բնական գազի սպառումը՝ 1 խ/մ հաշվարկով, և այն համապատասխանում է պարզաբանմամբ նշված ջերմամատակարարման ժամանակաշրջանի հաշվարկին:

#### **Եզրակացություն**

2021 թվականի երեք ամիսների ընթացքում ՔԿԾ-ի էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 9,404 կվ/ժ, գումարով՝ 376.10 հազ. դրամ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև:

4. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /421200/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԳԱՋ/

<sup>3</sup> Տե՛ս աղյուսակ 2:

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի նորմայի և փաստացի ծախսված բնական գազի քանակի միջև:**

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ քրեակատարողական հիմնարկների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է բնական գազի ծախսի հետևյալ սահմանաչափը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝ ջեռուցման և տաք ջրամատակարար համար՝ 1 խ/մ:

Ուսումնասիրելով քրեակատարողական հիմնարկների էլեկտրաէներգիայի մատակարարման համար իրականացված ծախսերը, պարզվել է, որ ծախսերը գերազանցել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նորմաները: Տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակով՝

| Հ/Հ | ՔԿՀ-ի<br>անվանումը | Հունվար                                                                    |                          | Փետրվար                                                                    |                          | Մարտ                                                                       |                          | Ընդամենը                                                                   |                          |
|-----|--------------------|----------------------------------------------------------------------------|--------------------------|----------------------------------------------------------------------------|--------------------------|----------------------------------------------------------------------------|--------------------------|----------------------------------------------------------------------------|--------------------------|
|     |                    | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշներ<br>ի տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշներ<br>ի տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշներ<br>ի տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | գումար<br>/հազ.<br>դրամ/ | Պլանային և<br>փաստացի<br>ցուցանիշներ<br>ի տարբերու<br>թյուն մ <sup>3</sup> | գումար<br>/հազ.<br>դրամ/ |
| 1.  | «Սևան»             | 14,800.0                                                                   | 2,028.40                 | 8,753.0                                                                    | 1,216.67                 | 8,326.0                                                                    | 1,157.31                 | 31,879.0                                                                   | 4,402.38                 |
| 2.  | «Կոշ»              | 14,644.0                                                                   | 1,475.65                 | 10,240.0                                                                   | 1,421.92                 | 9,397.0                                                                    | 1,306.18                 | 34,281.0                                                                   | 4,203.75                 |
| 3.  | «Արթիկ»            | 25,398.0                                                                   | 3,354.94                 | 21,650.0                                                                   | 2,939.45                 | 22,897.0                                                                   | 3,104.90                 | 69,945.0                                                                   | 9,399.29                 |
| 4.  | «Աբովյան»          | 24,774.0                                                                   | 3,354.94                 | 13,305.0                                                                   | 1,829.56                 | 14,994.0                                                                   | 2,054.20                 | 53,073.0                                                                   | 7,238.70                 |
| 5.  | «ԴՀ»               | 18,725.0                                                                   | 2,550.42                 | 8,500.0                                                                    | 1,181.50                 | 8,100.0                                                                    | 1,125.90                 | 35,325.0                                                                   | 4,857.82                 |
| 6.  | «Նուբարաշեն»       | 12,407.0                                                                   | 1,710.13                 | 7,143.0                                                                    | 992.87                   | 668.0                                                                      | 92.85                    | 20,218.0                                                                   | 2,795.86                 |
| 7.  | «Գորիս»            | 7,502.0                                                                    | 1,042.77                 | 6,794.0                                                                    | 944.36                   | 6,818.0                                                                    | 947.70                   | 21,114.0                                                                   | 2,934.84                 |
| 8.  | «Վանաձոր»          | -1,286.0                                                                   | -178.75                  | -914.0                                                                     | -127.04                  | -855.0                                                                     | -118.84                  | -3,055.0                                                                   | -424.64                  |
| 9.  | «Վարդաշեն»         | 5,631.0                                                                    | 782.70                   | 2,497.0                                                                    | 347.08                   | -485.0                                                                     | -67.41                   | 7,643.0                                                                    | 1,062.37                 |
| 10. | «Հրազդան»          | 5,148.0                                                                    | 715.57                   | 3,934.0                                                                    | 546.82                   | 4,363.0                                                                    | 606.45                   | 13,445.0                                                                   | 1,868.85                 |
| 11. | «Արմավիր»          | 34,087.0                                                                   | 4,593.57                 | 26,986.0                                                                   | 3,649.13                 | 5,626.0                                                                    | 782.01                   | 66,699.0                                                                   | 9,024.72                 |
|     | <b>Ընդամենը</b>    | <b>161,830.0</b>                                                           | <b>21,430.3</b>          | <b>108,888.0</b>                                                           | <b>14,942.34</b>         | <b>79,849.0</b>                                                            | <b>10,991.26</b>         | <b>350,567.0</b>                                                           | <b>47,363.98</b>         |

Ինչպես երևում է աղյուսակից, բնական գազի մատակարարման ծախսերը, բացառությամբ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի, էականորեն գերազանցում են սահմանված նորմերը: Հաշվարկների մեջ ներառված չեն քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և «Էրեբունի» հիմնարկի ծախսերը, հաշվի առնելով, որ այնտեղ տեղակայված են ծառայության աշխատակազմը:

Արդյունքում, 2021 թվականի երեք ամիսների բնական գազի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 350,567 խ/մ, գումարով՝ 47,363.90 հազ. դրամ: **Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի նորմայի և փաստացի ծախսված բնական գազի քանակի միջև:**

#### **Հաշվեքննության օբյեկտի արձագանքը**

Հաշվեքննիչ պալատի արձանագրածը պայմանավորված է 3 հանգամանքով՝

1) Որպես ելակետային տվյալ է ընդունվել միայն ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, և չեն հաշվարկվել քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) սպառման ծախսերը (ՔԿԾ պարճառաբանությունը տե՛ս նախորդիվ):

2) Հաշվեքննիչ պալատը հաշվարկները կատարելիս անտեսել է, որ ջեռուցման ժամանակահատվածից բացի բնական գազ սպառվում է նաև տարվա մյուս ժամանակահատվածում՝ տաք ջրամատակարարման համար:

3) Ջեռուցման ժամանակաշրջանի վերաբերյալ հաշվարկները կատարելիս անտեսվել է, որ անբարենպաստ եղանակային պայմանների պարճառով «Սևան», «Կոշ», «Արթիկ», «Վանաձոր» և «Հրազդան» ՔԿՀ-ներում ջեռուցման ժամանակաշրջանը երկարացված է եղել մինչև 31.03.2021թ., «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ մինչև 26.03.2021թ., իսկ «Արթիկ» ՔԿՀ-ում՝ մինչև 10.04.2021թ. (հիմք՝ Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի 15.03.2021թ. թիվ 45-Ա, 19.03.2021թ. թիվ 52-Ա և 01.04.2021թ. թիվ 65-Ա հրամաններ):

**Արդյունքում 2021 թվականի երեք ամիսների ընթացքում իրականում ավել է սպառվել 180.901 մ<sup>3</sup> բնական գազ, գումարով՝ 22.873.209 ՀՀ դրամ<sup>4</sup>:**

#### **Հաշվեքննողների մեկնաբանությունը**

**1) ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետը հստակ սահմանում է, որ քրեակարարողական հիմնարկների համար ծախսերի սահմանաչափերը սահմանված են՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար, որի մեջ ներառված են քրեակարարողական հիմնարկների աշխատակազմերը:**

**2) Հաշվի առնելով, որ հաշվեքննությունը իրականացվել է 2021թ. առաջին 3 ամիսների նկատմամբ, որը համընկել է ջեռուցման ժամանակահատվածի հետ, ուստի պարզաբանմամբ նշվածը կուսումնասիրվի 6 ամիսների հաշվեքննության ընթացքում:**

**3) Հաշվարկները իրականացվել են հունվար-մարտ ամիսների համար՝ բնական գազի սպառումը՝ 1 խ/մ հաշվարկով, և այն համապատասխանում է պարզաբանմամբ նշված ջերմամատակարարման ժամանակաշրջանի հաշվարկին:**

#### **Եզրակացություն**

ՔԿԾ-ի 2021 թվականի երեք ամիսների բնական գազի մատակարարման փաստացի ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 350,567 խ/մ, գումարով՝ 47,363.9 հազ. դրամ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի նորմայի և փաստացի ծախսված բնական գազի քանակի միջև:

<sup>4</sup> Տե՛ս աղյուսակ 3:

5. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ և ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4236/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ 2020Թ.-Ի ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ և ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 39-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:**

ՀՀ պետական բյուջեից ՔԿԾ-ին «Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ» հոդվածով 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,357,800.00 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (01.01.2021-31.03.2021թթ.) ճշգրտված պլանը կազմել է՝ 105,493.60 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 105,493.15 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 271,324.41 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի փաստացի ծախսի և ֆինանսավորման տարբերությունը կազմել է՝ 165,831.26 հազ. դրամ, որը պայմանավորված է ՀՀ պետական բյուջեի առաջին եռամսյակի վերաբաշխումներով:

ՔԿԾ-ի և բաց մրցույթում հաղթող ճանաչված «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի միջև 17.11.2020 թվականին կնքվել է ՀՀ արդարադատության նախարարության թվով տասերկու ՔԿՀ-ների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագիրը:

Պայմանագրի 4.1 կետի համաձայն, մատուցման ենթակա ծառայության գինը կազմել է 1,357,800.00 հազ. դրամ և այն ներառում է «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, որը սահմանված է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով: Պետք է նշել, որ սննդի պատրաստումը «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից իրականացվում է ՔԿՀ-ների խոհանոցում, կամ ՔԿԾ-ի կողմից տրամադրված այլ տարածքում, որտեղ բացակայում են կոմունալ ծախսերի հաշվարկման համար նախատեսված առանձնացված հաշվիչներ: Պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական

բնութագրով նախատեսված չէ, որ սննդի պատրաստման համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը պետք է իրականացվի ՔԿԾ-ի հաշվին: Սակայն առաջին եռամսյակում սննդի պատրաստումը «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է ՔԿՀ-ների էլ.էներգիայի, գազի, ջրի և ջեռուցման հաշվին: ***Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, այն է՝ «Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կադարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը», ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով, այն է՝ «...մատուցման ենթակա ծառայության գինը կազմել է 1,357,800.00 հազ. դրամ և այն ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:***

Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի համաձայն, սննդի պատրաստումն ու հատկացումը կատարվում է ՔԿՀ-ի տարածքում, Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից): Մեկ անձի համար պատրաստի սննդի վրա ծախսված օրվա գումարը որոշելու համար պետք է մասնակցի գնային առաջարկի ընդհանուր գումարը (1,357,800.00 հազ.դրամ) բաժանել հավելված 2-ով ներկայացված գրաֆիկով նշվածի օրերի (365 օր) և դատապարտյալների թվաքանակի (2,400 մարդ) վրա ( $1,357,800,000 : 365 : 2,400 = 1,550$ ), ստացված գումարով՝ 1,550 դրամով, կատարողն իրականացնելու է մեկ անձի օրվա սննդի տրամադրումը: Այսպիսով, տեխնիկական բնութագրում, սննդի պատրաստման մասով հստակ նկարագրված չէ, որ կոմունալ ծախսերը պետք է իրականացվի ՔԿԾ-ի հաշվին: ***Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հարկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ***

**մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:**

Պետք է նաև նշել, որ 2021 թվականի 1-ին եռամսյակում ՔԿՀ-ներում պահվող մեկ դատապարտյալի հաշվով կատարված փաստացի կոմունալ ծախսերը հիմնականում գերազանցում են ՀՀ կառավարության 16.06.2005 թվականի N 896-Ա որոշմամբ սահմանված կոմունալ ծախսերի նորմաները, որի վերաբերյալ մանրամասն ներկայացվել է նախորդ կետերում:

**Հաշվեքննության օբյեկտի արձագանքը**

Տնտեսական նպատակահարմարությունից ելնելով (փոքր լրակազմեր ունեցող և(կամ) մայրաքաղաքից հեռու գտնվող ՔԿՀ-ներում ևս ծառայությունների գրավչություն ապահովելու նկատառումներով)՝ թվով 12 ՔԿՀ-ների համար ձեռքբերվող սննդի պատրաստման ծառայությունները միավորված են եղել մեկ չափաբաժնում, ուստի և բոլոր ՔԿՀ-ների համար ծառայությունների արժեքը ներկայացվել է մեկ ընդհանուր գումարով: Նման պայմաններում մեկ չափաբաժնում ընդգրկված թեկուզև փարբեր ՔԿՀ-ների համար միևնույն ծառայությունների գինը չէր կարող փարբեր լինել, այսինքն՝ գործում է մեկ միջինացված գին, որը մեկ անձի հաշվարկով կազմում է օրական 1.550 ՀՀ դրամ և իր մեջ ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, փուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

**Այսինքն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ որևէ անհամապատասխանություն առկա չէ:**

Բացի այդ, «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրում հստակ ամրագրված է, որ Կատարողը սննդի պատրաստումը պետք է իրականացնի մասնագիտացված խոհարարների կողմից՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի խոհանոցում (կամ պատվիրատուի տրամադրած ՔԿՀ-ի այլ տարածքում), բացի «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն» և «Սևան» ՔԿՀ-ներից, որոնց սննդի պատրաստումը կարող է իրականացվել նաև ՔԿՀ-ի տարածքից դուրս: Կնքված պայմանագրով, դրա տեխնիկական բնութագրով կամ որևէ այլ փաստաթղթով Կատարողին վերապահված չի եղել կոմունալ ծախսերն ինքնուրույն կատարելու պարտավորություն (օրինակ՝ առանձին բաժանորդ դառնալու և այդ ծախսերն

ինքնուրույն կատարելու պահանջ), ինչը, բնականաբար, կարող էր հանգեցնել ծառայությունների արժեքի համամասնորեն թանկացման: Նման պարտավորության բացակայությունը, իր հերթին, ինքնաբերաբար վկայում է, որ ՔԿՀ-ի տարածքում իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների կոմունալ վճարները (ջուր, գազ, էլեկտրաէներգիա) կատարվելու են հենց ՔԿԾ-ի կողմից: Հետևաբար, ձեռք բերվող ծառայությունների հատկանիշների տարակերպ մեկնաբանության մասին խոսք չի կարող լինել:

**Այսինքն, տվյալ դեպքում ևս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ որևէ անհամապատասխանություն առկա չէ:**

#### **Հաշվեքննողների մեկնաբանությունը**

Հաշվեքննվող օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանման առաջին մասը, որ ՔԿՀ-ներում միևնույն ծառայությունների գները չեն կարող տարբեր լինել, ընդունելի է հաշվեքննողների կողմից, քանի որ գնումը կազմակերպվել է մեկ չափաբաժնով: Ինչ վերաբերում է արձագանքի երկրորդ մասին, այն ընդունելի չէ հաշվեքննողների կողմից:

#### **Եզրակացություն**

Սննդի պատրաստումը «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարվել է ՔԿՀ-ների կողմից տրամադրված տարածքներում՝ վերջիններիս կոմունալ ծախսերի /էլ.էներգիայ, գազ, ջուր, ջեռուցում/ հաշվին: ՔԿԾ-ի և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի գինը ներառում է **Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը**՝ այդ թվում նաև սննդի պատրաստման համար նախատեսված կոմունալ ծախսերը: Հետևաբար, նշված ծախսերը պետք է իրականացվեն «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից:

**Առկա է անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով և 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:**

6. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՌԿԱ ՃԱՇԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ և ԽՈՀԱՐԱՐՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ-ների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:**

Պայմանագրին կից տեխնիկական բնութագրով նախատեսվել է ՔԿՀ կարիքների համար ձեռքբերել պատրաստի սննդի մատուցման ծառայություններ (ներառյալ հացը), որը իրենից ներկայացնում է **սննդամթերքի ձեռքբերման, սննդի պատրաստման և հատկացման արդյունավետ համակարգ:**

Պայմանագրով սահմանված է, որ սննդի մատուցման ծառայություններ պետք է ամբողջովին կատարվեն «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի հաշվին: Սակայն, այդ ծառայությունների մատուցման գործընթացում 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ներգրավված են եղել նաև թվով 6 ՔԿՀ-ների հաստիքացուցակներում առկա թվով 12 դատապարտյալներ, որոնց վարձատրությունը նույնպես կատարվել է ՔԿԾ-ի հաշվին: **Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, այն է՝ «Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի փվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, փուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը», ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով, այն է՝ «...մատուցման ենթակա ծառայության գինը կազմել է 1,357,800.00 հազ. դրամ և այն ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, փուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:**

**Հաշվեքննության օբյեկտի արձագանք**

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Կատարողը ստանձնել է ՀՀ ԱՆ թվով տասերկու քրեակատարողական հիմնարկների կարիքների համար **սննդի պատրաստման ծառայությունների** մատուցման պարտավորությունը: Տեխնիկական բնութագրով **սահմանվել են ծառայությունների հետևյալ փուլերը.**

- «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքում, որը կտրամադրվի Պարվիրատուի կողմից, **անհրաժեշտ սննդամթերքի պահեստավորում**՝ Կատարողի կողմից բերված **անհրաժեշտ սարքավորումների միջոցով** (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի խոհանոցում (կամ Պարվիրատուի կողմից տրամադրված ՔԿՀ-ի այլ տարածքում) թարմ և որակյալ **սննդի պատրաստում**՝ մասնագիտացված խոհարարների կողմից (բացի «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն» և «Սևան» ՔԿՀ-ներից, որոնց սննդի պատրաստումը կարող է իրականացվել նաև ՔԿՀ-ի տարածքից դուրս), Կատարողի կողմից բերված **անհրաժեշտ սպասքի և սարքավորումների միջոցով** (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սպասք և սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող **կալանավորված անձանց և դատապարտյալներին որակյալ սննդի տրամադրում** (ներառյալ հացը), համաձայն նախորդ հաստատված ճաշացուցակի՝ մեկ կամ երկու շաբաթվա համար, որը տարբեր շաբաթների համար փոփոխվում է՝ բազմազանությունը ապահովելու նպատակով...»:

Պայմանագրով և տեխնիկական բնութագրով նախատեսվել է նաև. «Պատրաստի սննդի մատուցման ծառայություններն իրականացնելիս **Կատարողը պետք է իրականացնի հետևյալ լրացուցիչ ծառայությունները.**

ա. Անհրաժեշտ սառնարանների և վառարանների տրամադրում և մոնիտաժում՝ ՔԿ հիմնարկում, իսկ ծառայության ավարտից ապամոնիտաժում և հետ վերադարձ:

բ. Ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ տեխնիկական միջոցների խափանումների դեպքում, դրանց վերանորոգման և սպասարկման

ծառայություններ, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ մեկանգամյա տարաների տրամադրում:

գ. Կատարողի օգտագործման տակ գտնվող **պահեստների և խոհանոցների** տարածքների բարվոք վիճակի պահպանում, իսկ անհրաժեշտության դեպքում դրանց ընթացիկ նորոգում և այդ աշխատանքների իրականացման ժամանակահատվածում սննդի հատկացման գործընթացի անխափանության ապահովում:

դ. Կատարողի օգտագործման տակ գտնվող **պահեստների և խոհանոցների** տարածքների սանիտարահիգիենիկ միջոցառումների կազմակերպում և մշտապես մաքրության ապահովում:»:

**Այսինքն, կնքված պայմանագրով և տեխնիկական բնութագրով «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի օգտագործման են հանձնվել ոչ թե քրեակարարողական հիմնարկների ճաշարանները, այլ խոհանոցները (ինչպես նաև պահեստները):**

**Այլ կերպ՝ խոհանոցների տարածքների բարվոք վիճակի պահպանումը, դրանց ընթացիկ նորոգումը, սանիտարահիգիենիկ միջոցառումների կազմակերպումը և մշտապես մաքրության ապահովումը, ինչպես նաև սառնարանների և վառարանների մոնիթինգը (ապամոնիթինգը), խափանումների դեպքում տեխնիկական միջոցների վերանորոգումը և սպասարկումն է ընդգրկված «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում, իսկ նույն գործառույթների իրականացումը քրեակարարողական հիմնարկների ճաշարանների տարածքներում հենց ՔԿԾ-ի և համապատասխան ՔԿՀ-ի լիազորությունների տիրույթում է:**

Քրեակարարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց աշխատանքային զբաղվածությունն ապահովելու նկատառումներով մշտապես մի շարք դատապարտյալներ ներգրավվել են վարձատրվող տնտեսական աշխատանքներում, նրանց աշխատուժն օգտագործվել է վերանորոգման և բարեկարգման աշխատանքների, տարածքների մաքրման ու սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացման, բեռնաթափման և փոխադրման, հանձնույթների տեղափոխման և բաշխման, ինչպես նաև տարաբնույթ այլ աշխատանքների ընթացքում: Նախկինում, երբ սննդի պատրաստման գործառույթը դեռևս պարզիրակված չի եղել մասնավոր ընկերությունը, նույն անձինք միաժամանակ

ընդգրկվել են նաև սննդամթերքի պահեստավորման, սննդի պատրաստման և բաշխման գործընթացներում:

Վերջիններիս հետ աշխատանքային համապատասխան պայմանագրերը կնքված են եղել դեռևս նախկինից, «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ իրականացվող գործարքի մեկնարկից հետո այդ անձինք նույն պայմանագրերի շրջանակում շարունակել են իրենց տնտեսական աշխատանքներում ներգրավվածությունը (բնականաբար պետական բյուջեից ստացվող վարձատրության դիմաց), բացառությամբ արդեն «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից իրականացվող գործառույթներից:

Մասնավորապես, Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված դեպքերն առնչվում են հետևյալ անձանց.

| ՔԿՀ-ն                | №  | № | Ազգանուն,<br>անուն | Աշխատանքային պայմանագրի |              | Սննդի<br>նոր<br>համա<br>կարգի<br>ներդր<br>ման<br>ամսա<br>թիվը |
|----------------------|----|---|--------------------|-------------------------|--------------|---------------------------------------------------------------|
|                      |    |   |                    | աշխատանքի<br>բնույթը    | ամսաթիվը     |                                                               |
| «Արմավիր»            | 1. | 1 | Ն. Ա.              | ճաշարանի<br>բանվոր      | 30.12.2019թ. | 12.2019<br>թ.                                                 |
|                      | 2. | 2 | Հ. Գ.              | ճաշարանի<br>բանվոր      | 11.12.2019թ. |                                                               |
| «Գորիս»              | 3. | 1 | Գ. Ա.              | խոհանոցի<br>բանվոր      | 15.11.2019թ. | 03.2020<br>թ.                                                 |
| «Դավ.<br>հիվանդանոց» | 4. | 1 | Ղ. Ա.              | խոհանոցի<br>բանվոր      | 10.04.2019թ. | 04.2020<br>թ.                                                 |
| «Կոշ»                | 5. | 1 | Ա. Զ.              | ճաշարանի<br>բանվոր      | 11.02.2021թ. | 06.2020<br>թ.                                                 |
|                      | 6. | 2 | Խ. Գ.              | ճաշարանի<br>բանվոր      | 15.09.2020թ. |                                                               |

|            |     |   |         |                     |              |               |
|------------|-----|---|---------|---------------------|--------------|---------------|
|            | 7.  | 3 | S-Հ. Հ. | բանվոր              | 18.08.2020թ. |               |
| «Սևան»     | 8.  | 1 | Ե. Վ.   | ճաշարանի<br>բանվոր  | 20.11.2020թ. | 05.2020<br>թ. |
|            | 9.  | 2 | Հ. Յ.   | ճաշարանի<br>բանվոր  | 01.07.2019թ. |               |
|            | 10. | 3 | Մ. Ս.   | ճաշարանի<br>բանվոր  | 27.07.2020թ. |               |
| «Վարդաշեն» | 11. | 1 | Ֆ. Ա.   | խոհարարի<br>օգնական | 05.02.2019թ. | 04.2020<br>թ. |
|            | 12. | 2 | Հ.Ա.    | ճաշարանի<br>բանվոր  | 25.08.2020թ. |               |

Ինչպես հետևում է վերոհիշյալ աղյուսակից, Հաշվեքննիչ պալատի մատնանշած 12 դեպքերից 1-ը (S-Հ. Հ.) վերաբերելի չէ արձանագրվածին, քանի որ նույնիսկ աշխատանքային պայմանագրով տվյալ անձը որևէ առնչություն չի ունեցել թե՛ ճաշարանի և թե՛ խոհանոցի աշխատանքներին:

Մնացած 11 դեպքերից 8-ը (Ն. Ա., Հ. Գ., Ա. Զ., Խ. Գ., Ե. Վ., Հ. Յ., Մ. Ս. և Հ. Ա.) վերաբերում են հենց ճաշարանի (և ոչ թե՛ խոհանոցի) բանվորական աշխատանքներին, ինչը պատվիրելու և վճարելու լիազորությունները ՔԿԾ-ի և ՔԿՀ-ների տիրույթում է և ոչ թե՛ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի պարտավորությունների շրջանակում:

Մնացած 3 դեպքերում (Գ. Ա., Ղ. Ա. և Ֆ. Ա.) աշխատանքային պայմանագրերը կնքված են եղել մինչ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ գործարքի մեկնարկը, դրանից հետո դատապարտյալներն այլևս փաստացի ներգրավված չեն եղել սննդի պատրաստման գործընթացներում, այլ շարունակել են զբաղվել տնտեսական մյուս աշխատանքներով: Հետևաբար ընդամենը նրանց հետ կնքված պայմանագրերն են ենթակա վերաձևակերպման:

**Այսպիսով, Հաշվեքննության արձանագրությունում ներառված խեղաթյուրման փաստերն իրականում բացակայում են:**

**Հաշվեքննողների մեկնաբանությունը**

Հաշվեքննվող օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումը հաշվեքննողների կողմից կուսումնասիրվի հաջորդ 6 ամիսների հաշվեքննության շրջանակներում:

### **Եզրակացություն**

Թվով վեց ՔԿՀ-ներում աշխատող դատապարտյալների համար սահմանված հաստիքները ֆինանսավորվել ՔԿԾ-ի կողմից, այնինչ նշված վարձատրության ծախսը՝ ըստ Պայմանագրի պետք է իրականացվեր «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող սննդի մատուցման շրջանակներում: Արդյունքում, նշված ֆինանսավորումը կազմել է **2,563.02 հազ. դրամ:**

**Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:**

## **II. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ**

7. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՌԿԱ ՃԱՇԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ և ԽՈՀԱՐԱՐՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով**

**սահմանված պահանջների մասով: Նշված անհամապատասխանության հետևանքով առկա է խեղաթյուրում 2,563.02 հազ. դրամի չափով:**

Պայմանագրին կից տեխնիկական բնութագրով նախատեսվել է ՔԿՀ կարիքների համար ձեռքբերել պատրաստի սննդի մատուցման ծառայություններ (ներառյալ հացը), որը իրենից ներկայացնում է **սննդամթերքի ձեռքբերման, սննդի պատրաստման և հատկացման արդյունավետ համակարգ:**

Պայմանագրով սահմանված է, որ սննդի մատուցման ծառայություններ պետք է ամբողջովին կատարվեն «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի հաշվին: Սակայն, այդ ծառայությունների մատուցման գործընթացում 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ներգրավված են եղել նաև թվով 6 ՔԿՀ-ների հաստիքացուցակներում առկա թվով 12 դատապարտյալներ, որոնց վարձատրությունը նույնպես կատարվել է ՔԿԾ-ի հաշվին: **Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, այն է՝ «Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը», ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով, այն է՝ «...մատուցման ենթակա ծառայության գինը կազմել է 1,357,800.00 հազ. դրամ և այն ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:**

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում սննդի պատրաստման ծառայություններում ներգրավված դատապարտյալների վճարված աշխատավարձերն՝ ըստ ամիսների.

Աղյուսակ 4, հազ. դրամ

| Հ/Հ | ՔԿՀ                           | Ազգանուն անուն | Պաշտոն           | Հունվար          |                 | Փետրվար          |                 | Մարտ             |                 | Ընդամենը         |                 |
|-----|-------------------------------|----------------|------------------|------------------|-----------------|------------------|-----------------|------------------|-----------------|------------------|-----------------|
|     |                               |                |                  | Պաշտոն . դրույքը | Վճարվող գումարը | Պաշտոն . դրույքը | Վճարվող գումարը | Պաշտոն . դրույքը | Վճարվող գումարը | Պաշտոն . դրույքը | Վճարվող գումարը |
| 1   | «Արմավիր»                     | Ն.Ա.           | ճաշարանի բանվոր  | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 277.85           | 204.00          |
|     |                               | Հ.Գ.           | ճաշարանի բանվոր  | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 277.85           | 204.00          |
| 2   | «Գորիս»                       | Գ.Ա.           | խոհանոցի բանվոր  | 89.10            | 68.00           | 89.10            | 68.00           | 89.10            | 68.00           | 267.31           | 204.00          |
| 3   | «Դատապարտյալներ ի հիվանդանոց» | Ղ.Ա.           | խոհանոցի բանվոր  | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 277.85           | 204.00          |
| 4   | «Կոշ»                         | Ա.Զ.           | ճ/բանվոր         |                  |                 | 60.64            | 43.68           | 72.09            | 52.21           | 132.73           | 95.88           |
|     |                               | Խ.Գ.           | ճ/բանվոր         | 93.29            | 68.00           | 93.29            | 68.00           | 93.29            | 68.00           | 279.87           | 204.00          |
|     |                               | Տ-Հ.Հ.         | ճ/բանվոր         | 89.10            | 68.00           | 17.82            | 12.40           |                  |                 | 106.92           | 80.40           |
| 5   | «Սևան»                        | Ե.Վ.           | ճաշարանի բանվոր  | 93.29            | 68.00           | 93.29            | 68.00           | 93.29            | 68.00           | 279.87           | 204.00          |
|     |                               | Հ. Յ.          | ճաշարանի բանվոր  | 93.29            | 68.00           | 93.29            | 68.00           | 93.29            | 68.00           | 279.87           | 204.00          |
|     |                               | Մ.Ս.           | ճաշարանի բանվոր  | 12.44            | 38.84           |                  |                 |                  |                 | 12.44            | 38.84           |
| 6   | «Վարդաշեն»                    | Ֆ.Ա.           | խոհարարի օգնական | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 92.62            | 68.00           | 277.85           | 204.00          |
|     |                               | Հ.Ա.           | ճաշարանի բանվոր  | 92.62            | 56.98           |                  |                 |                  |                 | 92.62            | 56.98           |
|     | Ընդամենը                      |                |                  | 933.60           | 707.82          | 817.90           | 600.08          | 811.53           | 596.21          | 2,563.02         | 1,904.10        |

Այսպիսով, թվով 6 ՔԿՀ-ների թվով 12 դատապարտյալներին ՔԿԾ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում վճարված **2,563.02 հազ. դրամ** աշխատավարձը պետք է վճարվեր «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի հաշվին: **Առկա անհամապատասխանությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև պայմանագրով սահմանված պահանջների հետ հանգեցրել է դատապարտյալներին վճարված 2,563.02 հազ. դրամ աշխատավարձի գծով խեղաթյուրման:**

#### **Հաշվեքննության օբյեկտի արձագանքը**

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Կատարողը ստանձնել է ՀՀ ԱՆ թվով տասերկու քրեակատարողական հիմնարկների կարիքների համար **սննդի պատրաստման ծառայությունների** մատուցման պարտավորությունը: Տեխնիկական բնութագրով **սահմանվել են ծառայությունների հետևյալ փուլերը.**

- «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքում, որը կտրամադրվի Պարվիրատուի կողմից, **անհրաժեշտ սննդամթերքի պահեստավորում**՝ Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի խոհանոցում (կամ Պարվիրատուի կողմից տրամադրված ՔԿՀ-ի այլ տարածքում) թարմ և որակյալ **սննդի պատրաստում**՝ մասնագիտացված խոհարարների կողմից (բացի «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն» և «Սևան» ՔԿՀ-ներից, որոնց սննդի պատրաստումը կարող է իրականացվել նաև ՔԿՀ-ի տարածքից դուրս), Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սպասքի և սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սպասք և սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող **կալանավորված անձանց և դատապարտյալներին որակյալ սննդի տրամադրում** (ներառյալ հացը), համաձայն նախորոք հաստատված ճաշացուցակի՝ մեկ կամ երկու շաբաթվա

համար, որը տարբեր շաբաթների համար փոփոխվում է՝ բազմազանությունը ապահովելու նպատակով...»:

Պայմանագրով և տեխնիկական բնութագրով նախատեսվել է նաև. «Պատրաստի սննդի մատուցման ծառայություններն իրականացնելիս **Կատարողը պետք է իրականացնի հետևյալ լրացուցիչ ծառայությունները.**

ա. Անհրաժեշտ սառնարանների և վառարանների տրամադրում և մոնիտաժում՝ ՔԿ հիմնարկում, իսկ ծառայության ավարտից ապամոնիտաժում և հետ վերադարձ:

բ. Ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ տեխնիկական միջոցների խափանումների դեպքում, դրանց վերանորոգման և սպասարկման ծառայություններ, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ մեկանգամյա տարաների տրամադրում:

գ. Կատարողի օգտագործման տակ գտնվող **պահեստների և խոհանոցների** տարածքների բարվոք վիճակի պահպանում, իսկ անհրաժեշտության դեպքում դրանց ընթացիկ նորոգում և այդ աշխատանքների իրականացման ժամանակահատվածում սննդի հատկացման գործընթացի անխափանության ապահովում:

դ. Կատարողի օգտագործման տակ գտնվող **պահեստների և խոհանոցների** տարածքների սանիտարահիգիենիկ միջոցառումների կազմակերպում և մշտապես մաքրության ապահովում:»:

**Այսինքն, կնքված պայմանագրով և տեխնիկական բնութագրով «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի օգտագործման են հանձնվել ոչ թե քրեակադարողական հիմնարկների ճաշարանները, այլ խոհանոցները (ինչպես նաև պահեստները):**

**Այլ կերպ՝ խոհանոցների տարածքների բարվոք վիճակի պահպանումը, դրանց ընթացիկ նորոգումը, սանիտարահիգիենիկ միջոցառումների կազմակերպումը և մշտապես մաքրության ապահովումը, ինչպես նաև սառնարանների և վառարանների մոնիտաժումը (ապամոնիտաժումը), խափանումների դեպքում տեխնիկական միջոցների վերանորոգումը և սպասարկումն է ընդգրկված «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում, իսկ նույն գործառույթների իրականացումը քրեակադարողական հիմնարկների ճաշարանների տարածքներում հենց ՔԿԾ-ի և համապատասխան ՔԿՀ-ի լիազորությունների տիրույթում է:**

Քրեակարարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց աշխատանքային զբաղվածությունն ապահովելու նկատառումներով մշտապես մի շարք դատապարտյալներ ներգրավվել են վարձատրվող տնտեսական աշխատանքներում, նրանց աշխատուժն օգտագործվել է վերանորոգման և բարեկարգման աշխատանքների, տարածքների մաքրման ու սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացման, բեռնաթափման և փոխադրման, հանձնույթների տեղափոխման և բաշխման, ինչպես նաև տարաբնույթ այլ աշխատանքների ընթացքում: Նախկինում, երբ սննդի պատրաստման գործառույթը դեռևս պարզվիրակված չի եղել մասնավոր ընկերությունը, նույն անձինք միաժամանակ ընդգրկվել են նաև սննդամթերքի պահեստավորման, սննդի պատրաստման և բաշխման գործընթացներում:

Վերջիններիս հետ աշխատանքային համապատասխան պայմանագրերը կնքված են եղել դեռևս նախկինից, «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ իրականացվող գործարքի մեկնարկից հետո այդ անձինք նույն պայմանագրերի շրջանակում շարունակել են իրենց տնտեսական աշխատանքներում ներգրավվածությունը (բնականաբար պետական բյուջեից ստացվող վարձատրության դիմաց), բացառությամբ արդեն «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից իրականացվող գործառույթներից:

Մասնավորապես, Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված դեպքերն առնչվում են հետևյալ անձանց.

| ՔԿՀ-ն     | №   | № | Ազգանուն, անուն | Աշխատանքային պայմանագրի |              | Սննդի նոր համակարգի ներդրման ամսաթիվը |
|-----------|-----|---|-----------------|-------------------------|--------------|---------------------------------------|
|           |     |   |                 | աշխատանքի բնույթը       | ամսաթիվը     |                                       |
| «Արմավիր» | 13. | 1 | Ն. Ա.           | ճաշարանի բանվոր         | 30.12.2019թ. | 12.2019թ.                             |
|           | 14. | 2 | Հ. Գ.           | ճաշարանի բանվոր         | 11.12.2019թ. |                                       |
| «Գորիս»   | 15. | 1 | Գ. Ա.           | խոհանոցի բանվոր         | 15.11.2019թ. | 03.2020թ.                             |

|                          |     |   |         |                     |              |           |
|--------------------------|-----|---|---------|---------------------|--------------|-----------|
| «Դատ.<br>հիվանդանոց<br>» | 16. | 1 | Ղ. Ա.   | խոհանոցի<br>բանվոր  | 10.04.2019թ. | 04.2020թ. |
| «Կոշ»                    | 17. | 1 | Ա. Զ.   | ճաշարանի<br>բանվոր  | 11.02.2021թ. | 06.2020թ. |
|                          | 18. | 2 | Խ. Գ.   | ճաշարանի<br>բանվոր  | 15.09.2020թ. |           |
|                          | 19. | 3 | Տ-Հ. Հ. | բանվոր              | 18.08.2020թ. |           |
| «Սևան»                   | 20. | 1 | Ե. Վ.   | ճաշարանի<br>բանվոր  | 20.11.2020թ. | 05.2020թ. |
|                          | 21. | 2 | Հ.Յ.    | ճաշարանի<br>բանվոր  | 01.07.2019թ. |           |
|                          | 22. | 3 | Մ. Ս.   | ճաշարանի<br>բանվոր  | 27.07.2020թ. |           |
| «Վարդաշեն»               | 23. | 1 | Ֆ.Ա.    | խոհարարի<br>օգնական | 05.02.2019թ. | 04.2020թ. |
|                          | 24. | 2 | Հ. Ա.   | ճաշարանի<br>բանվոր  | 25.08.2020թ. |           |

Ինչպես հետևում է վերոհիշյալ աղյուսակից, Հաշվեքննիչ պալատի մատնանշած 12 դեպքերից 1-ը (Տ-Հ. Հ.) վերաբերելի չէ արձանագրվածին, քանի որ նույնիսկ աշխատանքային պայմանագրով տվյալ անձը որևէ առնչություն չի ունեցել թե՛ ճաշարանի և թե՛ խոհանոցի աշխատանքներին:

Մնացած 11 դեպքերից 8-ը (Ն. Ա., Հ. Գ., Ա. Զ., Խ. Գ., Ե. Վ., Հ. Յ., Մ. Ս. և Հ. Ա.) վերաբերում են հենց ճաշարանի (և ոչ թե՛ խոհանոցի) բանվորական աշխատանքներին, ինչը պատվիրելու և վճարելու լիազորությունները ՔԿԾ-ի և ՔԿՀ-ների տիրույթում է և ոչ թե՛ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի պարտավորությունների շրջանակում:

Մնացած 3 դեպքերում (Գ. Ա., Ղ. Ա. և Ֆ. Ա.) աշխատանքային պայմանագրերը կնքված են եղել մինչև «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ գործարքի մեկնարկը, դրանից

հետո դատապարտյալներն այլևս փաստացի ներգրավված չեն եղել սննդի պատրաստման գործընթացներում, այլ շարունակել են զբաղվել տնտեսական մյուս աշխատանքներով: Հետևաբար ընդամենը նրանց հետ կնքված պայմանագրերն են ենթակա վերաձևակերպման:

**Այսպիսով, Հաշվեքննության արձանագրությունում ներառված խեղաթյուրման փաստերն իրականում բացակայում են:**

#### **Հաշվեքննողների մեկնաբանությունը**

Հաշվեքննվող օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումը հաշվեքննողների կողմից կուսումնասիրվի հաջորդ 6 ամիսների հաշվեքննության շրջանակներում:

## ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

| № | Անհամապատասխանություն/ խեղաթյուրում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | Վերացված է/ վերացված չէ/<br>ընթացքում է <sup>5</sup> | Հիմնավորումներ <sup>6</sup> |
|---|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------|-----------------------------|
| 1 | <p>ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության համար 2021թ.-ին էներգետիկ և կոմունալ ծառայությունների մասով սահմանված նորմաներից ավելին է պլանավորվել՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրաէներգիայի գծով -219,680.80 հազ. դրամ</li> <li>• Գազամատակարարման գծով – 100,049.42 հազ. դրամ</li> <li>• Ջրամատակարարման և ջրահեռացման գծով – 23,320.87 հազ. դրամ</li> </ul> <p>Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջների մասով:</p> |                                                      |                             |
| 2 | <p>2021 թվականի երեք ամիսների ընթացքում ՔԿԾ-ի ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 75,743.7 մ/խ, գումարով՝ 13,280.90 հազ. դրամ:</p>                                                                                                                                                                                                                                                                                                                                         |                                                      |                             |

<sup>5</sup> Ընտրել երեք տարբերակներից մեկը /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

<sup>6</sup> Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում և ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

|   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |  |  |
|---|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|
|   | Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված ջրի ծախսի նորմայի և փաստացի ծախսված ջրի քանակի միջև:                                                                                                                                                                                                              |  |  |
| 3 | <p>2021 թվականի երեք ամիսների ընթացքում ՔԿԾ-ի էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 9,404 կվ/ժ, գումարով՝ 376.10 հազ. դրամ:</p> <p>Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև:</p> |  |  |
| 4 | <p>ՔԿԾ-ի 2021 թվականի երեք ամիսների բնական գազի մատակարարման փաստացի ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 350,567 խ/մ, գումարով՝ 47,363.9 հազ. դրամ:</p> <p>Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի նորմայի և փաստացի ծախսված բնական գազի քանակի միջև:</p>                            |  |  |
| 5 | Սննդի պատրաստումը «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարվել է ՔԿՀ-ների կողմից տրամադրված տարածքներում՝ վերջիններիս կոմունալ ծախսերի /էլ.էներգիա, գազ, ջուր, ջեռուցում/ հաշվին: ՔԿԾ-ի և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի                                                                                                                                      |  |  |

|   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |  |  |
|---|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|
|   | <p>միջև կնքված Պայմանագրի գինը ներառում է <b>Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը</b>՝ այդ թվում նաև սննդի պատրաստման համար նախատեսված կոմունալ ծախսերը: Հետևաբար, նշված ծախսերը պետք է իրականացվեն «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից:</p> <p><b>Առկա է անհամապատասխանությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով և 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:</b></p> |  |  |
| 6 | <p>Թվով վեց ՔԿՀ-ներում աշխատող դատապարտյալների համար սահմանված հաստիքները ֆինանսավորվել ՔԿԾ-ի կողմից, այնինչ նշված վարձատրության ծախսը՝ ըստ Պայմանագրի պետք է իրականացվեր «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող սննդի մատուցման շրջանակներում: Արդյունքում, նշված ֆինանսավորումը կազմել է <b>2,563.02 հազ. դրամ:</b></p> <p><b>Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման</b></p>                                     |  |  |

|   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |  |  |
|---|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|
|   | պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:                                                                                                                                                                                                                                                                                      |  |  |
| 7 | Թվով 6 ՔԿՀ-ների թվով 12 դատապարտյալներին ՔԿԾ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում վճարված 2,563.02 հազ. դրամ աշխատավարձը պետք է վճարվեր «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի հաշվին: <b>Առկա անհամապատասխանությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև պայմանագրով սահմանված պահանջների հետ հանգեցրել է դատապարտյալներին վճարված 2,563.02 հազ. դրամ աշխատավարձի գծով</b> |  |  |